



## ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՀԱՎՀԱՆՆԻՍՅԱՆ

### ԱՇԽԱՐՀԻ ԼՈՒՅՍՈԸ

(Տյառնընդառաջի տոնի առինվ)

«Եղիս ի յայտնութիւն ներանոսաց,  
և փառ ժողովրդեան բում խրայէլի»:

(ՊՈԽ., թ 32)

  
ավատացյալ եղբայրնե՞ր և քույ-  
րե՞ր. Հայաստանյաց Առաքելական  
Եկեղեցին, այսօր, մհծ Հանդիմու-  
թյամբ և լուսավառությամբ, Հոգի-  
զմայլ շարականների և տաղերի ֆրգակցու-  
թյամբ, տոնում է Փրկչի քառասնօրյա Ս.  
Տաճար գալստյան տոնը: Ինչպիս ցույց է  
տրվում այսօրվա ավետարանների ընթերցու-  
մից, Քրիստոսի ծննդից 40 օր հետո, Նրա  
բարեպաշտ ու Հավատացյալ մայրը Փրկչին  
տարավ ծրուաղեմ, Ստորանի Տաճարը՝  
«յանդիման առնել Տեառն»: Ահա այդ պատ-  
ճառով, այդ տոնը Հայաստանյաց Առաքե-  
լական Եկեղեցու մեջ կոչվում է Տյառնդ-  
տուազ, երբ Փրկիչը, քառասնօրյա մանուկ,  
Տաճար է բերվում բնծայլիբուռ Հոր Աստուծո  
և «կատարել զօրէնս վասն փրկութեան հե-  
թանոսաց»:

Հստ Մովսիսական օրէնքի՝ «Ամենայն ա-  
րու որ բանայ զարգանդ, սուրբ Տեառն կո-  
չեսցի»: Մննդական մայրը երեխայի ծնն-

դից հետո պետք է սպասեր 7 օր իրքն  
«պղծեալ», 8-րդ օրը երեխային պետք է բ  
թլիատել, ապա 33 օր ևս սպասել, և 40-րդ  
օրը Տաճար գնալ սրբվելու համար, և «ուալ  
պատարագս» մի տարեկան գառ և մի զույգ  
տարտակ, մեկը ողջակեղի համար, իսկ մյու-  
սը՝ «վասն մեղաց»:

Ս. Մարիամն ու Հովսեփը կետ առ կետ  
կատարեցին Մովսիսական օրէնքի բոլոր պա-  
հանջները և Մանուկ Հիսուսին տարան Տա-  
ճար:

Այդ օրը Տաճարը լիքն էր բազմությամբ:  
Բացի Մարիամից, այնտեղ եկել էին շատ  
մայրեր, գրկած իրենց անդրանիկ երեխա-  
ներին: Եվ ահա բազմության մեջ, մի պատ-  
կառելի ծերունի, ուարդար և երկիւղածա-  
մարդ, որ «ակն ունէր միիթարութեանն իս-  
րայէլի», բազմությունը ճեղքելով առաջա-  
նում է գեպի Ս. Մարիամը, և իր դոզով,  
անարյոն բազուկների մեջ վերցնում է  
կույսը, և Տաճարի կամարների տակ հոչա-

կում է Մանկան մեծությունն ու նշանակությունը մարդկության համար: Մանուկ Հիսուսաց լինելու է «վոյս ի յայտնության հեթանոսաց, և փառս ժողովրդեան քում իսրայէլի»:

Առաջին անգամ Ս. Սիմեոն ծերունիխ է, որ, հրեա ժողովրդի ազգային-կրոնական մեծ կենտրոն Տաճարում հոչակում է կույսի ծնունդը, Քրիստոսի մեծությունն ու մեսիսականությունը: Մերունի Սիմեոնը գրկում, շոշափում է հեթանոսների կույսը, իր ժողովրդի փառքը: Եվ աստվածավախ ու հավատավոր ծերունին ժխայտայր Աստուածորդությունը ի գիրկս իւրա:

Տյառնընդառաջի տոնը առավելապես կույսի տոնն է, վոյս ի յայտնության հեթանոսաց: Ս. Սիմեոն ծերունու անսուստ բերնով, Տաճար բերված քառասնօրյա Մանուկը հոչակում է իր ժամանակի և բոլոր ժամանակների և աշխարհների համար իրոք կույս, ճշմարտություն, արդարություն:

Իր աստվածային առաքելության առաջին իսկ օրերից Հիսուս հաստատեց Սիմեոն ծերունու այդ մարդարեսությունը:

Քրիստոսի ժամանակակից աշխարհը ապրում էր բարոյական, իմացական, հոգեկան խավարի մեջ, մարդկությունը խարիսակում էր անհույս և անդեկ, մթովթյան, մեղքի, հուսալքման մեջ: Եվ ահա, այդ հոգեկան քառսի մեջ ճառագայթեց Աստվածային կույսը, կույսը մարմին առաջ և լուսավորեց իր ուղին կորցրած մարդկության ճանապարհը: «Ճա եմ լոյս աշխարհի», — հայտարարեց Հիսուս:

Քառասնօրյա Տաճար բերված այս լուսեղին Մանուկը, արդարեւ, հանդիսացավ փերկության կույս, որը ծագեց իր դարն ապրած հին աշխարհի հորիզոնի վրա և իր փրկարար լուսությունը աշխարհը:

Արդարեւ, աշխարհի, կյանքի կույսն է Քրիստոսը: «Ճինչեղեղ յաշխարհի եմ, լոյս և ամաշխարհի» (Յովհ., թի 5):

Գեղեցիկ և աստվածային է կույսը...:

Կյանքում, բնության մեջ, ամեն գեղեցիկ ստեղծագործություն լուսով է ստեղծվել: Արարշագործությունից առաջ խավար էր տիրում ամեն կողմ: Աստված ամեն ինչ ստեղծեց լուսով և տեսավ «զի բարի է»: Առանց

արկի լույսին ու չերմության շիա կյանք, չկատրախություն ու գեղեցկություն: Աստված ևս կույս է: «զի Աստուած լոյս է և խաւար ի նման շիք» (Ա. Յովհ., Ա. 5), իսկ քրիստոնյաները կոչվում են ոռդիք լուսոյ:

Կյանքի խավարը, տպիտության, մեղքի, շարության խավարը լուսավորող մեծ ու կենսաշող լուսարձակն է Քրիստոս, որն աշխարհը է եկել լուսավորելու մահվան խավարը և կյանքի անել, մութ ու անարկ շավիդները:

Ս. Սիմեոն ծերունու օրով, և հետագայում ևս, Խրայելը շգնահատեց երբեք իր հողի վրա ճառագած կույսի արժեքն ու իրեւ թափառական, ընկավ դարերի ճանապարհի վրա, իր հոգին վերջնականապես վաճառելով խավարի իշխանության: Մասիհան եկալ նրա համար, որպես «փառս ժողովրդեան քում Խրայէլի», իսկ Խրայելը ընդմիշտ փակեց իր հոգու աշխերը՝ շտեսնելու համար կույսի գեղեցկությունն ու մաքրությունը: «ամենայն որ զար գործէ՝ ատեայ զկոյսն, իսկ որ առնէ ճշմարտութիւն՝ գայ առ կոյսն» (Յովհ., Գ. 20):

Միայն հրեաները չեին կույսի թշնամիները. ամեն տեղ կան այսօր կույսի, կյանքի, ճշմարտության թշնամիներ, որոնք խավարը, շարիքը, արյունը, կեղծիքը ավելի են սիրում քան լույսը, որովհետև ոգործք իւրեանց շարութեան են»:

Մարգանցից քանինե՞ր և քանինե՞ր դեռևս խարիսակում են առանց հավատի, սիրո, հույսի, ընկղմված խավարի, մեղքի մեջ,

Հայ ժողովուրդը Աշխարհի կույսն ընդունողների մեջ առաջիններից մեկն է եղել: Կույսը ծագեց հեռավոր Հրեաստանում, բայց Քրիստոսի անմիշական առաքյալներն և հայ ժողովրդի հայրենի առաջին մեծ լուսավորիչները՝ Ս. Թադեոսն ու Ս. Բարթովիմեոսը, Հայաստան աշխարհ բերին ավետարանի կույսը, որպես հայտնություն մեր լուսատեհն նախնիքներին: Հայ ժողովուրդը, աշխարհի ամենահին ու կուլտուրական ազգերից մեկը, միշտ էլ մեծ խանդակառությամբ և ուրախությամբ է բացել իր մտքի ու հոգու լուսամուտները մեծ կույսի առաջ: Հայ ժողովուրդը, որպես լույսի կարու ժողովուրդ, իր ողջ պատմության ընթացքում ձգտել է

լուսավորության; լուսի շուրջը պտտվող թիթեռնիկների նման իր թևերը այրելով, բայց միշտ փյունիկի նման կենդանի մնալով լուսի իր ձգտութիւննեց:

Լուս, ավելի՝ լուս... ահա թե ինչի՞ է ձգտում այսօր ողջ մարդկությունը:

Աշխարհը գեռևս, մարդկությունը առհասարակ, չեն լուսավորված Քրիստոսի կույսով; Կյանքը լուսի և խավարի, բարու և շարի կոփին է, բայց վերջնական հաղթանակը այդ պայքարում պատկանում է լուսին, որովհետև լուսը կյանք է տալիս, լուսը գեղեցկություն է, լուսը սուրբ է և աստվածային:

Քրիստոնեությունը լուսի կրոնն է, լուսի հաղթանակը՝ խավարի վրա, կյանքի հաղթանակը մահվան վրա, բարության հաղթանակը շարության վրա:

Բեթղեհեմի անշուր մասութում ծնված լուսը, Երուաղեմի Տաճարում Ս. Սիմեոնի բերնով Հոչակված կույսը արդարն կարող է հալածել խավարի, շարիքի իշխանությունը մարդկանց հոգիներից և լուսավորել բովանդակ տիեզերքն ու մարդկությունը, եթե մարդիկ հավատան այդ կույսին և նրա զորության. «Իսկ որ ընկալանն զնա՝ իտ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել, որոց հաւատացեն յանուն նորա»: Քրիստոս իր

աստվածային լուսը ծագեցնում է բոլորի վրա, առանց խտրության, ինչպես արևը ծագում է ողջ երկրագնդի վրա: Բայց պետք է սրբել, մաքրել հոգու լուսամուտները, որպեսզի նրա կույսը անարգել կարողանա թափանցել մարդկանց սրտերի և հոգիների մեջ:

Հայ ժողովուրդը եղել է անցյալում լուսապաշտ ժողովուրդներից մեկը, լուսի գեղեցկության երկրագող ժողովուրդներից մեկը, որ այս պատմական հողերի վրա կանգնեցրել է կույսի խորան Ս. Եղմիածինը, և Արագածի կատարին, անպարան, վառել է կուսավորչի կանթեղը, որ միշտ լուսավոր ու պայծառ մնա հայության հոգին, լուսը, հավատը:

Այդ կույսը հրեղեն սյունի նման առաջնորդել է հայ ժողովուրդին գեղի այսօրվա լուսապայծառ իրականությունը:

Քրիստոսի քառասնօրյա Ս. Տաճար ընծայման օրը, բոլոր հավատացյալների սըրտառուց մաղթանքն այն է, որ շմարի հայության սրտից կուսավորչի կանթեղը, Քրիստոսի կույսը, մեր նախնյաց սրբազնան հավատի կինդանի հոգը:

Թո՛ղ միշտ հայոց եկեղեցիներում և հայ ժողովուրդի հոգում անշեշ շողա հավատի լուսը, Քրիստոսի կույսը: Ամեն:

